«Ա. Դ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

# 2023թ.

Երևան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ..... 3

1. Կազմակերպության ստեղծման հիմքեր ..... 6

2. Կազմակերպության առաքելություն, սկզբունքներ, արժեքներ, գործունեության նպատակներ, շահառուներ ..... 7

3.1. Իրավապաշտպան/մարդու իրավունքների պաշտպանություն ..... 9

3.2. Քաղաքացիական հասարակության հզորացում ..... 10

3.3. Մշտադիտարկում և շահերի պաշտպանություն ..... 11

3.4. Հետազոտական-վերլուծական, ուսումնամեթոդական գործունեություն ..... 11

3.5. Ռեսուրս կենտրոնի ծառայությունների մատուցում ..... 12

3.6. Մամուլի տեսության վարում ..... 12

3.7. Ենթադրամաշնորհների տրամադրում ..... 13

3.8. Համագործակցություն և մասնակցություն ..... 13

4. Հաջողության պատմություններ ..... 14

5. Կազմակերպության անդամ դառնալու, անդամությունից դուրս գալու և անդամությունից հեռացնելու կարգի մասին տեղեկություն ..... 17

6. Կազմակերպության խորհրդի անդամների մասին տվյալներ ..... 18

7. Գործընկերների մասին տվյալներ ..... 18

8. Ֆինանսավորող (Դոնոր) կազմակերպությունների ցանկ ..... 20

9. Աուդիտորական ընկերության մասին տեղեկություն ..... 20

10. Սախարովի կենտրոնի աշխատակազմը ..... 21

11. Հրատարակումներ ..... 22

12. Հապավումներ ..... 23

## Նախաբան

Հարգելի՛ բարեկամներ և գործընկերներ,

Սիրով ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Սախարովի կենտրոն կամ Կազմակերպություն) գործունեության 2023 թվականի զեկույցը (այսուհետ՝ զեկույց)։

Սույն զեկույցում ամփոփ ներկայացված են Սախարովի կենտրոնի առաքելության, սկզբունքների, որդեգրած արժեքների, գործունեության նպատակների, շահառուների շրջանակի, ինչպես նաև իրականացված ծրագրերի ու ֆինանսական աղբյուրների նպատակային ծախսերի մասին տվյալներ և անհրաժեշտ այլ տեղեկություններ։

Սախարովի կենտրոնը մշտապես կարևորել է կառույցի գործունեության օրինականության, բարեխղճության, թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքների պահպանումն ինչպես իր անդամների, շահառուների, դոնոր կազմակերպությունների և գործընկերների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության առջև։ Այդ նպատակով Սախարովի կենտրոնը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ քննվող ժամանակահատվածում «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իր գործունեության և ֆինանսական աղբյուրների մասին հաշվետվություններ է ներկայացրել նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե և դրանք հրապարակել նաև իր պաշտոնական կայքէջում[1]։

Հաշվետու ժամանակահատվածում Կազմակերպությունը, ըստ իր կանոնադրության, սոցիալական և խոցելի գրեթե բոլոր խմբերին (տե՛ս «Շահառուներ» բաժինը) ներառել է առաջարկվող ծառայությունների հասցեատերերի կազմում: Այդ խմբերի համար՝

ա) անհատական և խմբային, առկա, արտագնա և առցանց անվճար եղանակներով իրականացվել են իրավաբանական խորհրդատվություններ, պատրաստվել և տարածվել են իրավական թեմաներով հուշաթերթեր, իրավաբանական վերլուծություններ, զեկույցներ, հաշվետվություններ ու հոդվածներ, համապատասխան հաստատություններ են ներկայացվել դիմումներ, Կազմակերպության ներկայացուցիչները ամենատարբեր հարթակներով հանդես են եկել իրավունքների պաշտպանությանն ուղղված հայտարարություններով և ելույթներով,

բ) քաղաքացիական գիտակցության բարձրացման միտումով մարզային մասնաճյուղերում գործել են *Քաղաքացիական հասարկության դպրոցներ (ՔՀԴ)* և ռեսուրս կենտրոններ,

գ) անցկացվել են մշտադիտարկումներ խնդրահարույց ոլորտենում՝ արդյունքները ներկայացնելով շահագրգիռ կողմերին,

դ) երիտասարդ հետազոտողներից ձևավորված *Հետազոտական-վերլուծական, ուսումնամեթոդական գործունեության կենտրոնները* (ՀՎՈՒՄԿ) ծավալել են փորձագիտական և հետազոտական գործունեություն, ինչի հիման վրա մշակվել են շահերի պաշտպանության ռազմավարություններ և ներկայացվել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), տարածքային և պետական կառավարման մարմիններին:

2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմից (44-օրյա պատերազմ) հետո Սախարովի կենտրոնի շահառուների ցանկում ընդգրկվել են նաև Լեռնային Ղարաբաղից

[1] http://www.sakharovcenter.org/?page=reports&lng=am&year=2023

(Արցախ) բռնի տեղահանված մեր հայրենակիցները: Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի, ապա 2023 թվականի սեպտեմբերի 19-ի ռազմական գործողությունների հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվեցին ավելի քան 100,000 հայեր, որոնք ժամանակավոր պաշտպանության տակ վերցվեցին Հայաստանի Հանրապետությունում: Արցախահայերի բռնի տեղահանումը դժվարհաղթահարելի հումանիտար և մշակութային ճգնաժամ ստեղծեց Հայաստանում. այն ներքին և արտաքին մարտահրավերների ու փորձությունների առջև կանգնեցրեց ՀՀ գրեթե բոլոր կառույցներին, որից հետ չմնացին նաև հասարակական կազմակերպությունները: Այս առումով բացառություն չէր նաև Սախարովի կենտրոնը, որի ուշադրության առանցքում էին հայտնվել այս անձանց իրավական և սոցիալական խնդիրները, և որն իր գործունեությամբ նպաստել և շարունակում է նպաստել այդ մարտահրավերների լուծմանը:

Լեռնային Ղարաբաղից (Արցախ) բռնի տեղահավաած 60-ից ավելի անձանց տրամադրվել են իրավաբանական անվճար խորհրդատվություններ իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների, դրանց սահմանափակումների, ինչպես նաև խախտումների և բողոքարկման մեխանիզմների, վարչական մարմինների լիազորությունների շրջանակի վերաբերյալ: Սոցիալական աջակցության և բնակարանային ապահովման ծրագրերից օգտվելու դիմումների քննարկման արդյունքում հայտնաբերվել են անճշտություններ ու անհիմն մերժումներ, և Սախարովի կենտրոնի իրավաբանական ծառայությունների աջակցությամբ 2023 թվականին 12 շահառուներ կարողացել են վերականգնել իրենց իրավունքները:

Իրավապաշտպան գործունեությունից բացի Սախարովի կենտրոնում իրենց կարևոր տեղն են զբաղեցնում Կազմակերպության ստեղծած *Քաղաքացիական հասարակության դպրոցը* (ՔՀԴ) և *Հետազոտական-վերլուծական և ուսումնամեթոդական կենտրոնները* (ՀՎՈՒՄԿ): Դրանց միջոցով նպաստում ենք ՀՀ համայնքների երիտասարդների և քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ-ների) ոչ ֆորմալ կրթությանն ու իրավագիտակից հասարակության ձևավորմանը, քանի որ հասարակության իրավագիտակցության բարձր մակարդակը քաղաքացիական հասարակության ձևավորման հիմքն է, իսկ իրավագիտակից հասարակություն ունենալը բխում է բոլորի՝ թե՛ հասարակության, թե՛ օրենքը կիրառողների շահերից:

2023 թվականին կազմակերպությունն անցել է արտաքին գնահատում, և, ի թիվս այլ կետերի, բարձր են գնահատվել Քաղաքացիական հասարակության դպրոցի (ՔՀԴ) ծառայությունները: Դրա մասին է վկայում այն, որ դպրոցի մասնակից ակտիվ երիտասարները դարձել են իրենց համայնքներում ոչ ֆորմալ առաջնորդներ և համախմբողներ: Նրանցից շատերը, դասընթացների շնորհիվ փոխելով մտադրությունը և մշակելով գաղափարներ մարզերում մնալու համար, իրենց համայնքներում դարձել են հանրային ակտիվ դերակատարներ: Դպրոցի արդյունավետության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ դասընթացներին մասնակցած անձանց կողմից Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում ստեղծվել են **8** նախաձեռնող խմբեր, գրանցվել են **6** ՔՀԿ-ներ:

Բավական ակտիվորեն աշխատել են նաև ՀՎՈՒՄԿ-երը՝ հիմնականում թիրախավորելով գյուղական համայնքները: ՀՎՈՒՄԿ-երի իրականացրած հետազոտություններից առանձնահատուկ կարևորություն են ունեցել ՔՀԿ-ների կայունության բարձրացմանը, փոքր քաղաքներում և գյուղական համայքներում քաղաքացիական ակտիվության զարգացմանը և հանրային տարածքի ընդլայնմանն ուղղված հետազոտություններն ու ռազմավարությունների մշակումը, տեղական ինքնակառավարման մարմինների հետ կառուցողական երկխոսության ծավալումը, համայնքների զարգացման տարբեր ոլորտների (ժողովրդագրություն, տնտեսություն, կրթություն, մշակույթ, բնապահպանություն և կանաչ տեխնոլոգիաներ) համար այլընտրանքային զարգացման

նախագծերի մշակումը, որոնք հիմք են հանդիսացել օրենսդրական փոփոխությունների և կառավարման տարբեր մակարդակների որոշումների կայացման համար:

2023 թվականին Սախարովի կենտրոնը նպաստել է նաև սկսնակ և զարգացող կազմակերպությունների կարողությունների բարելավմանն ու կայուն գործելակերպի ձևավորմանը՝ իր դրամաշնորհային ծրագրի շրջանակում մրցութային կարգով քաղաքացիական հասարակության **8** կազմակերպությունների տրամադրելով փոքր ենթադրամաշնորհներ 8200 ԱՄՆ դոլարի չափով: Ենթադրամաշնորհների իրականացման ողջ ընթացքում Սախարովի կենտրոնի աշխատակիցներն աջակցել են այդ կազմակերպություններին իրենց ծրագրերն արդյունավետ իրականացնելու և ֆինանսական պատշաճ հաշվետվություններ ներկայացնելու հարցում:

Հարգելի՛ ընթերցող, հուսով եմ, որ Սախարովի կենտրոնի գործունեության վերաբերյալ ձեզ հետաքրքրող հարցերի առումով անհրաժեշտ տեղեկությունը ներկայացված է սույն զեկույցում: Այնուամենայնիվ, եթե կլինեն այլ հարցեր, որոնց պատասխանները չեք գտնի այստեղ, խնդրում եմ, այդ մասին տեղյակ պահել, մենք սիրով հարկավորը կներկայացնենք Ձեր ուշադրությանը:

Հարգանքով՝

Մերի Խաչատրյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն

## 1. Կազմակերպության ստեղծման հիմքեր

Սախարովի կենտրոնն անկախ հասարակական միավորում է, ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպությունը, որը հանդիսանում է «Ա. Դ. Սախարովի անվան առաջընթացի, մարդու իրավունքների պաշտպանության և գթասրտության հայկական ֆոնդի» իրավահաջորդը, հիմնադրվել է 1990 թվականի հոկտեմբերի 9-ին Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդի թիվ 457 որոշման հիման վրա: 1997 թվականի դեկտեմբերի 26-ից Կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է որպես հասարակական կազմակերպություն (գրանցման վկայական՝ N 414):

Կազմակերպությունը վերագրանցվել է 2000 թվականի հունվարի 21-ին, իսկ նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցվել է 2006 թվականի հուլիսի 14-ին (գրանցման համար՝ 211.171.04085): Սախարովի կենտրոնի արտահերթ ժողովի որոշման հիման վրա Կազմակերպության փոփոխություններով ու լրացումներով՝ նոր խմբագրությամբ կանոնադրությունը պետական գրանցում է ստացել 2017 թվականի դեկտեմբերի 8-ին:

Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետությունում, ունի երեք մասնաճյուղ Շիրակի (1996թ.), Գեղարքունիքի (1997թ.) և Սյունիքի (1997թ.) մարզերում՝ համապատասխանաբար Գյումրի, Գավառ և Գորիս քաղաքներում:

Կազմակերպությունն իր գործունեության աշխարհագրությունը չի սահմանափակում միայն այս երեք մարզերով. իրավապաշտպան գործունեությունն իրականացնելիս կամ իրավաբանական անվճար օգնություն ցուցաբերելիս շահառուների բնակության վայրը խոչընդոտ չի հանդիսանում:

Սախարովի կենտրոնն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակներն ու ձևերը: Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության սահմանադրության, օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և իր կանոնադրության հիման վրա:

<u>Կազմակերպության կառավարման մարմինները</u>

Սախարովի կենտրոնի կառավարման մարմիններն են բարձրագույն մարմինը՝ *Ժողովը*, գործադիր մարմինը՝ *տնօրենը*, և Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ *Խորհուրդը*: Կազմակերպության գործադիր և կոլեգիալ մարմիններն ընտրովի են: Կազմակերպության հերթական ժողովները գումարվում են հինգ տարին մեկ անգամ, սակայն Ժողովն իրավունք ունի կազմակերպել նաև արտահերթ ժողովներ՝ ըստ անհրաժեշտության և հարցերի հրատապության:

Սախարովի կենտրոնի բարձրագույն կառավարման մարմինը նրա անդամների **ժողովն** է, որի իրավասության կարևորագույն հարցերից են Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և/կամ լրացումների կատարումը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը, այլ իրավաբանական անձի ստեղծման կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և այլ կարևորագույն հարցերի շուրջ որոշումների ընդունումը:

Կազմակերպության գործադիր մարմինը **տնօրենն** է, որի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը: Տնօրենը իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից գործում է առանց լիազորագրի:

Կոլեգիալ կառավարման մարմինը **խորհուրդն** է, որը քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ, բացառությամբ կանոնադրությամբ Կազմակերպության Ժողովին ու տնօրենին վերապահված իրավասությունների: Խորհուրդը կարող է իրականացնել նաև Ժողովի որոշումներով նախատեսված այլ լիազորություններ:

## 2. Կազմակերպության առաքելություն, սկզբունքներ, արժեքներ, գործունեության նպատակներ, շահառուներ

**Առաքելությունը**

Սախարովի կենտրոնի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու ժողովրդավարական համակարգի զարգացման խթանումն է:

**Սկզբունքները**

Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:

**Արժեքները**

**Սախարովի կենտրոնի արժեքները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝**

- ներքին արժեքներ, որոնք ուժեղացնում են հասարակական Կազմակերպության ներուժը իր կանոնադրական նպատակներն արդյունավետ իրականացնելու համար,
- արտաքին արժեքներ, որոնք նպաստում են ՀՀ հասարակական կյանքի ժողովրդավարացմանը և իրավունքների գերակայությանը:

**Ներքին արժեքներն են՝**

- կազմակերպության ապաքաղաքական բնույթը,
- աշխատողների պրոֆեսիոնալիզմի շարունակական կատարելագործումը,
- կարգապահության և պատասխանատվության բարձր մակարդակը,
- Հայաստանում ծագող մարտահրավերներին արագ արձագանքումը,
- անհանդուրժողական վերաբերմունքը՝ հանրային կյանքում ցանկացած խտրականության նկատմամբ:

**Արտաքին արժեքներն են՝**

- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջազգային նորմերի գերակայությունը,
- ՀՀ սահմանադրության և ազգային օրենսդրության գերակայությունը,
- օրենքի առջև ֆիզիկական և իրավաբանական անձանց հավասարությունը,
- անկախությունը՝ արտաքին և ներքին ազդեցություններից:

Սախարովի կենտրոնն անկախ է քաղաքական և այլ ազդեցություններից, իր գործունեության մեջ անաչառ է և պատասխանատու կատարած աշխատանքի արդյունքների համար:

**Գործունեության նպատակները**

- Նպաստել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը:
- Նպաստել քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների հզորացմանը:
- Նպաստել որոշումների ընդունման և հանրային կառավարման վերահսկողության գործընթացներին հասարակության մասնակցության ապահովմանը:
- Նպաստել բնակչության իրավագիտակցության, իրավական մշակույթի և ընկալման մակարդակի բարձրացմանը:
- Մատուցել իրավաբանական անվճար ծառայություններ:
- Աջակցել հանրապետությունում արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը, այդ նպատակով իրականացնել ընտրությունների և հանրաքվեների նկատմամբ հասարակական վերահսկողություն, այդ թվում դիտորդական առաքելություն:
- Անցկացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և նրանց կողմից իրականացվող ծրագրերի, ինչպես նաև հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և բնապահպանական ոլորտների ուսումնասիրություններ, մշտադիտարկում ու գնահատում:
- Մասնակցել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքների և իրավական այլ ակտերի ստեղծման աշխատանքներին և հանրային քննարկումներին:
- Իրականացնել Կազմակերպության նպատակներին համապատասխան և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

<u>Շահառուները</u>

- Բնակչության սոցիալապես անապահով քաղաքացիները
- Կենսաթոշակառուները
- Հաշմանդամություն ունեցող անձինք
- Փախստականները, փախստականի կարգավիճակ և ժամանակավոր ապաստան հայցող անձինք
- Օտարերկրյա պետությունների քաղաքացիները
- Գաղթյալներն ու ներքին տեղահանվածները
- Բնական և մարդածին աղետների գոտու բնակիչները
- Զինծառայողներն ու նրանց ընտանիքի անդամները
- Սահմանափակ գործունակ և անգործունակ ճանաչված անձինք
- Թրաֆիքինգի և բռնության ենթարկված անձինք
- Երեխաները, երիտասարդները
- Հասարակական միավորումների ու հիմնադրամների անդամներն ու շահառուները
- Անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք
- Քաղաքացիական նախաձեռնող խմբերը

- Արցախից բռնի տեղահանված և հայաստանում ժամանակավորապես կամ մշտապես բնակություն հաստատած անձինք

## 3. Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները

### 3.1. Իրավապաշտպան/մարդու իրավունքների պաշտպանություն

2023 թվականին Սախարովի կենտրոնի երևանյան գրասենյակը և մասնաճյուղերը տրամադրել են անվճար իրավաբանական անհատական, խմբային, առկա և առցանց խորհրդատվություն **2881 անձի**, որից **2139-ը՝ կին, 742-ը՝ տղամարդ**, այդ թվում՝

| Իրավաբանական խորհրդատվություն | | | |
|---|---|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **Ընդ.** | **Տղամարդ** | **Կին** |
| Երևան (կենտրոնական) | 885 | 228 | 657 |
| Շիրակ | 1101 | 275 | 826 |
| Գեղարքունիք | 516 | 185 | 331 |
| Սյունիք | 379 | 54 | 325 |
| **Ընդամենը** | **2881** | **742** | **2139** |

**91 անգամ** իրականացված խմբային խորհրդատվություններին մասնակցել է **544 մարդ**։

| Խմբային խորհրդատվություններ | | |
|---|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **Անգամ** | **Մասնակից** |
| Երևան (կենտրոնական) | 1 | 3 |
| Շիրակ | 72 | 301 |
| Գեղարքունիք | 9 | 122 |
| Սյունիք | 9 | 118 |
| **Ընդամենը** | 91 | 544 |

| Առցանց խորհրդատվություններ | |
|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **Մասնակից** |
| Երևան (կենտրոնական) | 435 |
| Շիրակ | 237 |
| Գեղարքունիք | 141 |
| Սյունիք | 50 |
| **Ընդամենը** | **863** |

Մշակվել և տարածվել են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող, ինչպես նաև տեղեկատվական բնույթի **165 հուշաթերթեր**:

| **Հուշաթերթեր** | |
|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **2023թ.** |
| Երևան (կենտրոնական) | 36 |
| Շիրակ | 54 |
| Գեղարքունիք | 39 |
| Սյունիք | 36 |
| **Ընդամենը** | **165** |

Տեղական, տարածքային և կենտրոնական կառավարման մարմիններին ուղարկվել է **224** գրություն, հարցում, դիմում հասարակական շահերի և քաղաքացիների իրավունքների արտադատարանական պաշտպանության նպատակով:

| **Գրություններ, դիմումներ և հարցումներ** | |
|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **2023թ.** |
| Երևան (կենտրոնական) | 74 |
| Շիրակ | 73 |
| Գեղարքունիք | 49 |
| Սյունիք | 28 |
| **Ընդամենը** | **224** |

Սախարովի կենտրոնի իրավաբանական ծառայության աջակցությամբ **2023 թվականի ընթացքում** կազմվել և պետական գրանցման են ներկայացվել **6** իրավաբանական անձանց կանոնադրություններ և հիմնադիր փաստաթղթեր, որոնք եղել են նոր հիմնադրվող հասարակական կազմակերպություններ: **2023 թվականին** կազմակերպությունը 5 շահառուների շահերը ներկայացրել է դատարաններում:

**2023 թվականին** իրավաբանների կողմից շահառուների անունից իրենց քաղաքացիական և վարչական գործերով կազմվել են **17** հայցադիմումներ, դիմումներ, միջնորդություններ և բողոքներ և ներկայացվել ՀՀ դատական տարբեր ատյաններ:

### 3.2. Քաղաքացիական հասարակության հզորացում

Քաղաքացիական հասարակության հզորացման նպատակով 2004 թվականից Գյումրի, Գավառ, Գորիս քաղաքներում գործում են Քաղաքացիական հասարակության դպրոցներ (ՔՀԴ), որոնք ստեղծվել են Սախարովի կենտրոնի նախաձեռնությամբ: ՔՀԴ-ների հիմնական հոսքերն են՝ «Կառավարման դասընթաց՝ ՔՀԿ-ների համար», «Խորացված

դասընթաց՝ ՔՀԿ-ների համար», «Ուսուցանողների ուսուցում», «Նախասիրական դասընթացներ՝ թիրախ տարբեր խմբերի համար», «Մեդիագրագիտության և քննադատական մտածողության դասընթաց»: Որպես կանոն սույն դպրոցները գործում են սեպտեմբեր-մայիս ժամանակահատվածներում՝ ունկնդիրների համար վերոնշյալ հոսքերով իրականացնելով երկարաժամկետ դասընթացներ:

**Ընդհանուր առմամբ 2023 թվականին ՔՀԴ բոլոր ուսուցումներին մասնակցել են 1015 ունկնդիրներ, որից 438-ը՝ Գյումրիում, 370-ը՝ Գավառում, 207-ը՝ Գորիսում:**

### 3.3. Մշտադիտարկում և շահերի պաշտպանություն

Շահերի պաշտպանության համատեքստում **2023 թվականին** իրականացվել են կարճաժամկետ և երկարաժամկետ **14** մշտադիտարկումներ, այդ թվում՝

| **Մշտադիտարկումներ (Մոնիտորինգներ) քանակը** | |
|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **Քանակը** |
| Երևան (կենտրոնական) | 3 |
| Շիրակ | 6 |
| Գեղարքունիք | 3 |
| Սյունիք | 2 |
| **Ընդամենը** | **14** |

**2023 թվականին** պատրաստվել են շահառուների գործերի, երևույթների, գործող իրավակարգավորումների մասին **24** վերլուծություններ և **28** օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, որոնք ներկայացվել են շահագրգիռ կողմերին:

| **Իրավական վերլուծությունների և օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ** | |
|---|---|
| **Սախարովի կենտրոնի գրասենյակը** | **Քանակը** |
| Երևան (կենտրոնական) | 27 |
| Շիրակ | 12 |
| Գեղարքունիք | 4 |
| Սյունիք | 9 |
| **Ընդամենը** | **52** |

### 3.4. Հետազոտական-վերլուծական, ուսումնամեթոդական գործունեություն

Հետազոտական-վերլուծական և ուսումնամեթոդական գործունեությունը ծավալվել է Սախարովի կենտրոնի Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մասնաճյուղերում՝ ձգտելով

ծառայել որպես յուրօրինակ հետազոտական-վերլուծական, քաղաքականությունների մշակման, հեռանկարի մոդելավորման *think-tank*:

<u>Գործունեության հիմնական ուղղություններն են՝</u>

- ՀՀ տարածաշրջաններում ՔՀԿ-ների և համայնքահեն կառույցների ու հիմնադրամների ընդհանուր կայունության բարձրացում,
- քաղաքացիական ակտիվության զարգացում,
- փորձառու, մասնագիտացված և համայնքահեն ՔՀԿ-ների միջև համագործակցության ուղիների զարգացում,
- քաղաքացիական հասարակության գիտելիքի, փորձի և ներուժի փոխանցում,
- փորձագիտական խորհուրդների ձևավորում՝ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մասնաճյուղերում,
- փորձագիտական և հետազոտական գործունեության իրականացում,
- ակտիվ երիտասարդների կողմից հետազոտությունների իրականացում, զեկույցների կազմում,
- էլեկտրոնային մամուլի, սոցիալական ցանցերի՝ ոլորտին վերաբերվող նյութերի տեսությունների կազմում և վերլուծություն,
- Քաղաքացիական հասարակության դպրոցի ուսումնական և թեմատիկ պլանների, ուսումնական մոդուլների մեթոդների և տեխնոլոգիաների մշակում,
- աշխատանք՝ ՔՀԴ ունկնդիրների հետ, հետադարձ կապի ապահովում,
- ուսումնական ձեռնարկների, ուղեցույցների, շտեմարանների կազմում:

### 3.5. Ռեսուրս կենտրոնի ծառայությունների մատուցում

Մասնաճյուղերում ձևավորված համայնքային ռեսուրս կենտրոնները ուսումնական, խորհրդատվական, հանրային իրազեկման և տեղեկատվության տարածման, տեխնիկական աջակցության ծառայություններ են մատուցել 110 կառույցների (ՔՀԿ, ՏԻՄ, մասնավոր կառույց) և 1205 անձի, այդ թվում՝

- Շիրակ - 51 կառույց,
- Գեղարքունիք - 35 կառույց,
- Սյունիք - 26 կառույց:

### 3.6. Մամուլի տեսության վարում

2023 թ. բոլոր մասնաճյուղերը կազմվել են ամսական մամուլի տեսություններ (ընդամենը՝ մամուլի **48** տեսություն)՝ քաղաքացիական հասարակության գործունեության, մարդու իրավունքների խախտումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ: Որպես կանոն մամուլի տեսության վարումը Կազմակերպության համար հիմք է հանդիսանում իրավական վերլուծությունների, մշտադիտարկումների, ինչպես նաև համապատասխան հարցումներով և առաջարկություններով ՀՀ պետական կառավարման և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններ դիմելու համար:

### 3.7. Ենթադրամաշնորհների տրամադրում

Հաշվետու տարում Սախարովի կենտրոնն իր դրամաշնորհային ծրագրերի շրջանակում ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում գործող համայնքահեն քաղաքացիական հասարակության **8** կառույցների տրամադրել է փոքր ենթադրամաշնորհներ իրենց կարճաժամկետ ծրագրերն իրականացնելու համար: **2023** թվականին տրամադրված ենթադրամաշնորհների հանրագումարը կազմել **8200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:** Ընդհանուր առմամբ իրականացվել են **8 ենթադրամաշնորհային ծրագրեր** (որից 3-ը՝ փորձագիտական հետազոտություն), որոնց արդյունքում՝

- հրապարակվել է էլեկտրոնային և տպագիր 12 հոդված,
- ապահովվել է 16 հաստատությունների (դպրոց, նախակրթարան, ցերեկային կենտրոն, ՏԻՄ) թափանցիկությունը,
- անցկացվել են 17 ֆոկուս-խմբային և կլոր սեղան քննարկումներ,
- ստեղծվել է միգրացիայով զբաղվող կառույցների համագործակցության ցանց,
- մշակվել, կազմվել, տարածվել են 300-ից ավել հարցաթերթեր և իրականացվել են 280 հարցումներ,
- կազմակերպվել ու անցկացվել են 40-ժամյա սեմինար-դասընթացներ,
- ստեղծվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող պատանիների և հաշմանադամություն ունեցող երիտասարդների աջակցության կենտրոն,
- իրականացվել են առցանց 3 քննարկումներ, տրվել է կազմակերպական խորհրդատվություն 15 ՔՀԿ-ների,
- մատուցվել են ռեսուրս կենտրոնի ծառայություններ 9 իրավաբանական կառույցներին և 120 անհատներին,
- կազմվել են անհատական-փորձագիտական 3 հետազոտություն և 5 զեկույց,
- ընդհանուր առմամբ 120-ից ավելի առաջարկություններ են ներկայացվել ՀՀ վիճակագրական կոմիտեի Շիրակի մարզային վարչության Գյումրու տարածքային բաժին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզի 7 համայնքապետարաններ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզեր, Գյումրու, Գավառի, Գորիսի համայնքապետարաններ, «Գավառտրանս» ՍՊԸ, հանարակրթական 10 դպրոցներ:

### 3.8. Համագործակցություն և մասնակցություն

Սախարովի կենտրոնը համագործակցում է տեղական և միջազգային ավելի քան **100** կազմակերպությունների հետ և ունի ավելի քան **60 կամավորներ**: Սախարովի կենտրոնի և՛ տնօրենը, և՛ աշխատակիցներո իրենց իրավապաշտպան գործունեության շրջանակում ներգրավվել են աշխատանքային տարբեր խմբերում: Օրինակ՝

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Երևանում նախաձեռնել է հին և պատմական «Կոնդ» թաղամասի վերակենդանացման հայեցակարգի մրցույթ, որի ժյուրի անդամ է ներգրավվել Սախարովի կենտրոնի իրավաբանը,
- ՄԱԿ-ի փախստականների հարցերով գործակալությունը (ՄԱԿ ՓԳՀ) և «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն Երևանում 2021-2023 թվականներին ձևավորել են աշխատանքային խումբ քաղաքացիություն չունեցող անձանց խնդիրների լուծման համար, որում ընդգրկվել է Սախարովի կենտրոնի իրավաբանը,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստեղծել է աշխատանքային խումբ, որում Սախարովի կենտրոնի իրավաբանը ներգրավված է

եղել «Երիտասարդության մասին» օրենքի և հայեցակարգի նախագծի մշակման հարցերով,

- Շիրակի մասնաճյուղը ծառայում է որպես ռեսուրս կենտրոն մի ծրագրում, որի նպատակն է կանխարգելել անչափահասների իրավախախտումները, վերացնել այդ հանցագործությունների հիմքում ընկած պատճառները և դրանց իրականացմանը նպաստող պայմանները,
- Շիրակի մասնաճյուղի ղեկավարը «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի (Վանաձոր, Գյումրի, Պիլա-Լեհաստան) մշտադիտարկման խմբի և «Գյումրու քաղաքապետարանի սոցիալական բնակարանների բաշխման կոմիտեի» անդամ է,
- Շիրակի մասնաճյուղի իրավաբանը իրավաբանական օգնություն է ցուցաբերում Շիրակի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովին,
- Շիրակի մասնաճյուղի ղեկավարի ասիստենտը «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոցում» կառավարման խորհրդի անդամ է,
- Գեղարքունիքի մասնաճյուղի իրավաբանն ընդգրկված է Գավառի տարածքային կենտրոնում գտնվող ՀՀ սոցիալական միասնական ծառայության մարզային համակարգող խորհրդում։

Սախարովի կենտրոնը համագործակցում է ավելի քան 100 տեղական և միջազգային կազմակերպությունների հետ և ունի ավելի քան 60 կամավոր։ Սախարովի կենտրոնի և՛ տնօրենը, և՛ աշխատակիցները իրենց իրավապաշտպան գործունեության շրջանակներում մասնակցում են տարբեր տարածաշրջանային աշխատանքային խմբերի։ Օրինակ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Երևանում նախաձեռնում է հին և պատմական «Կոնդ» թաղամասի վերակենդանացման հայեցակարգի մրցույթ, որին տնօրենը մասնակցում է որպես ժյուրիի անդամ։ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գործակալությունը (ՄԱԿ ՓԳՀ) և «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն Երևանում 2021-2023 թվականներին ստեղծել են աշխատանքային խումբ քաղաքացիություն չունեցող անձանց խնդիրների լուծման համար, որին մասնակցել է Սախարովի կենտրոնի իրավաբանը։ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստեղծել է աշխատանքային խումբ, որում Սախարովի կենտրոնի իրավաբանը ներգրավված է եղել «Երիտասարդության մասին» օրենքի և հայեցակարգի նախագծի մշակմանը։ Շիրակի մասնաճյուղը ծառայում է որպես ռեսուրս կենտրոն մի ծրագրի մեջ, որի նպատակն է կանխարգելել անչափահասների իրավախախտումները, վերացնել այդ հանցագործությունների հիմքում ընկած պատճառները և վերացնել դրանց իրականացմանը նպաստող պայմանները։ Նույն մասնաճյուղի ղեկավարը և ծրագրի համակարգողը հանդիսանում են «Դաշինք հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի մոնիտորինգի խմբի անդամներ (Վանաձոր, Գյումրի, Պիլա-Լեհաստան)։ Նա նաև «Գյումրու քաղաքապետարանի սոցիալական բնակարանների բաշխման կոմիտեի» անդամ է։ Շիրակի մասնաճյուղի իրավաբանը իրավաբանական օգնություն է ցուցաբերում Շիրակի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովին։ «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոցում» մասնաճյուղի օպերատորը կառավարման խորհրդի անդամ է։ Գեղարքունիքի մասնաճյուղի իրավաբանն ընդգրկված է Գավառի տարածքային կենտրոնում գտնվող ՀՀ սոցիալական միասնական ծառայության մարզային համակարգող խորհրդում։

## 4. Հաջողության պատմություններ

Ներկայացվում են 2023 թվականի հաջողության առավել ուշագրավ պատմությունները։

**Գործ 1**

Կազմակերպությանը դիմող քաղաքացին հայտնել է, որ իր և Երևանի Թիվ 1 տուն-ինտերնատ կազմակերպության միջև 5 տարի ժամկետով կնքվել է «Կացարանի և

սոցիալական ծառայությունների տրամադրման մասին» պայմանագիր, որի ժամկետն ավարտվելու և ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ուժը կորցրած ճանաչվելու պատճառաբանությամբ ստացել է բնակարանն անհապաղ ազատելու պահանջ: Քանի որ շահառուն իր մոր հետ հայտնվելու էր փողոցում և այդ պահին այլ բնակարան տեղափոխվելու կամ որևէ այլ կացարան ձեռքբերելու հնարավորություն չուներ, Սախարովի կենտրոնը համապատասխան միջնորդությամբ դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և խնդրել հաշվի առնել վերը թվարկված հանգամանքը և թույլատրել այդ ընտանիքին ժամանակավորապես բնակվել Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում մինչև նրանց կողմից այլ բնակտարածք ձեռքբերելն ու ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ընդունվելը: Միջնորդությունը բավարարվել է, քաղաքացուն թույլատրվել է իրեն հատկացված կացարանում բնակվել մինչև 2023 թվականի ապրիլը ներառյալ մինչև ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունումը:

**Գործ 2**

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքը բնակություն էր հաստատել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, սակայն սոցիալական նպաստ չէր ստանում Գյումրիում հաշվառում չունենալու պատճառով և ուներ բնակարանի ապահովման խնդիր: Սախարովի կենտրոնի իրավաբանական աջակցությամբ այս ընտանիքը հաշվառման է վերցվել իր փաստացի բնակության վայրի հասցեով, և լուծվել է նրա սոցիալական նպաստ ստանալու հարցը: Նշենք, որ ընտանիքն ընդգրկվել էր ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքում բնակարանի ապահովման ծրագրի շահառուների ցանկում:

**Գործ 3**

Սախարովի կենտրոնի Շիրակի մասնաճյուղում ուսումնական պրակտիկա են անցել Շիրակի պետական համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային համալսարանի, Գյումրու թիվ 1 և թիվ 4 արհեստագործական ուսումնարանների, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Շիրակի պետական գյուղատնտեսական քոլեջի 27 ուսանողներ, որոնցից 11-ն ընգրկվել են Սախարովի կենտրոնի ՔՀԴ դասընթացներում և հաջողությամբ ավարտել: Մասնակիցներից երկուսը Սախարովի կենտրոնի իրավաբանական ծառայության միջոցով հիմնադրել են հասարակական կազմակերպություն և արդեն ինքնուրույն իրականացնում են դրամաշնորհային ծրագիր:

**Գործ 4**

Շիրակի մասնաճյուղի գրասենյակում Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ունեցել Շիրակի մարզի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, անհատ ձեռներեցների, իրավաբանական այլ անձանց կին ղեկավարները: Նրանց տրամադրվել են իրավաբանական և կազմակերպչական խորհրդատվություններ, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնվել ընդգրկվելու և մասնակցելու Հայաստանում ստեղծված կանանց տնտեսական զորացման հարթակի աշխատանքներին: Ավելին՝ նրանցից երկուսը շահել են անհատական դրամաշնորհներ:

**Գործ 5**

2023թ. քաղաքացին դիմել է տան և դրան պատկանող հողամասի սեփականաշնորհման ընթացակարգին ծանոթանալու և սեփականաշնորհելու հարցում իրավական օգնություն ստանալու նպատակով: Քանի որ հողատարածքը գտնվում էր ՀՀ հողային օրենսգրքով սահմանված սահմանափակումների տակ, Գյումրու համայնքապետարանը չէր թույլատրում սեփականաշնորհել: Մինչդեռ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դեռևս 2015 թվականին նույն տարածքում գտնվող մեկ այլ հողամաս սեփականաշնորհվել էր:

Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ դիմում է ներկայացվել Գյումրու համայնքի ղեկավարին՝ հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և միատեսակ վարչարարություն իրականացնելու վերաբերյալ: 2023թ. ընթացքում ավագանու որոշմամբ փոփոխվել է հողամասի գործառնական նշանակությունը և ստացվել է որոշում՝ հողամասը և դրա վրա կառուցված տունը օրինականացնելու վերաբերյալ:

**Գործ 6**

Գավառ քաղաքի բնակիչ 83-ամյա Ա.Մ.-ին աջակցելու խնդրանքով Գեղարքունիքի մասնաճյուղին 2023 թ. հունիսին դիմել է նրան խնամող, կրկին տարեց Խ.Ա.-ն՝ նշելով, որ Ա.Մ.-ն ապրում է միայնակ և սոցիալական աջակցության կարիք ունի: Գեղարքունիքի մասնաճյուղը Գավառի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին ներկայացրել է քաղաքացու սոցիալական ծանր վիճակում գտնվելու նկարագիրը: Համայնքապետարանը արագ արձագանքել է կազմակերպության մտահոգությանը, որի արդյունքում քաղաքացուն տրամադրվել է սննդի փաթեթ, ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ հետայսու ևս շարունակվելու է քաղաքացուն սոցիալական աջակցության և հիգիենայի միջոցների պարբերական տրամադրումը:

Նույն անձին սոցիալական աջակցություն տրամադրելու հարցը քննարկվել է նաև Միասնական սոցիալական աջակցության Գավառի տարածքային կենտրոնի հետ: Սախարովի կենտրոնի կողմից ներկայացվել է, որ քաղաքացու հետ նույն հասցեում հաշվառված են ընտանիքի չափահաս այլ անդամներ, որոնք փաստացի նրա հետ չեն բնակվում, կան ընտանիքի բացակա անդամներ, որոնք բնակվում են Հայաստանից դուրս և տարեց մարդուն օգնության ձեռք չեն մեկնում: Արդյունքում քաղաքացին 2023թ. օգոստոսից ընդգրկվել է ընտանեկան նպաստ ստացողների ցուցակում:

**Գործ 7**

Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ իշխան» սոցիալական կենտրոնի և Սախարովի կենտրոնի նախաձեռնությամբ կենտրոնի շահառու ծնողները ճանաչողական այցով հյուրընկալվել են Գավառի միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) տարածքային կենտրոնում: Հանդիպման ժամանակ մասնակիցներից մեկը ներկայացրել իր ընտանիքի սոցիալական ծանր վիճակը և ներքոհիշյալ խնդիրը, որին հաջողվել է տալ դրական լուծում: Շահառուն 3-րդ խմբի հաշմանդամ է, ունի մեկ անչափահաս երեխա, սեփականության իրավունքով բնակարան չունի, ապրում են վարձակալությամբ: Ամուսինը ն աշխատել էր «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ում, որը համայնքի ավագանու որոշմամբ լուծարվել և կազմավորվել էր որպես «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկ: Քաղաքացին, չկողմնորոշվելով կառուցվածքային փոփոխությունների հարցում, աշխատանքից ազատման դիմում էր ներկայացրել՝ չցանկանալով աշխատանքը շարունակել այդ հիմնարկում: Ազատման դիմումից հետո մտքափոխվել էր, սակայն կաշկանվում էր կրկին նույն կազմակերպությանը դիմել: Ընդառաջելով՝ քաղաքացու և նրա կնոջ խնդրանքին՝ իրականացվել է հանդիպում «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի ներկայացուցիչների հետ, որի արդյունքում քաղաքացին կրկին ընդունվել է աշխատանքի:

**Գործ 8**

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի[2] 11-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջով՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների մշակած նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում, որը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ»: Իսկ ՀՀ

[2] ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188985

արդարադատության նախարարի 07.05.2018թ. հ. 180-Ն հրամանի համաձայն[3]՝ նորմատիվ իրավական ակտերի էլեկտրոնային ձևով պաշտոնական հրապարակումն իրականացվում է ARLIS (http://www.arlis.am) միասնական կայքում հրապարակելու միջոցով:

Սախարովի կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվել են Գեղարքունիքի մարզի ՏԻՄ-երի կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի մշակած նախագծերի և ընդունած որոշումների հրապարակման գործընթացի դիտարկումներ, որոնց հիման վրա համայնքապետարաններին առաջարկվել է հետևողական լինել օրենսդրական պահանջների կատարմանը: Օրենսդրական պահանջների կատարումն ամբողջությամբ ապահովել է Սևանի համայնքապետարանը, իսկ Գավառի համայնքապետարանը 2023թ. դեկտեմբերին ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի նախագծերը հրապարակել է e-draft.am կայքում:

**Գործ 9**

Հաշվետու ժամանակահատվածում Սախարովի կենտրոնն իրականացրել է բազմաթիվ թեմաներով իրավական վերլուծություններ, որոնցից ուշագրավը՝ «Կանանց և անչափահասների նկատմամբ բռնության առկա իրավիճակն ու պատճառները Հայաստանի Հանրապետությունում» թեման է: Միևնույն ժամանակ, հայ հասարակությունը «բռություն» երևույթը որպես անթույլատրելի վարքագիծ և արարք միանշանակ չի ընդունում և չի ընկալում: Այս կարծիքը հավասարապես վերաբերում է և՛ բռնություն գործադրողին, և՛ բռնության ենթարկվող անձին և՛ բռնության ականատեսներին: Բռնության որոշ տեսակներ և դրանց առանձին դրսևորումներ ճանաչելի չեն տուժողների կողմից (դրանք չեն գիտակցվում և ընդունվում որպես բռնություն): Երեխաները բավարար չափով (իրենց տարիքին համապատասխան) իրազեկ չեն բռնությունից պաշտպանվելու միջոցների մասին (չգիտեն ո՞ւմ դիմել, ե՞րբ հայտնել դեպքի մասին, վստահ չեն, որ դրա համար կամ դրա մասին բարձրաձայնելիս չեն պատժվի): Ուստի այդ հարցերով և՛ օրենսդրական բարեփոխումները, և՛ օրենքով ամրագրված միջոցները միանշանակ արդյունավետություն չեն կարող ապահովել:

Մեր ուսումնասիրություններն ու ՀՀ պետական լիազոր մարմիններին ուղղված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ կանանց և անչափահասների նկատմամբ բռնության դեպքերով իրենց կողմից առանձին վիճակագրություն չի իրականացվում[4]: ՀՀ քննչական կոմիտեից բանավոր հայտնել են, որ մեր գրությունն ընդունում են նաև ի գիտություն՝ հետագայում համապատասխան վիճակագրություն իրականացնելու նպատակով: Փաստորեն ՀՀ պետական լիազոր մարմինների կողմից՝ մասնավորապես իրավապահ մարմինների կողմից, բռնության դեպքերի վերաբերյալ շատ առանցքային հարցերով վիճակագրություն չի իրականացվում: Հուսով ենք, որ հաջորդիվ ՀՀ իրավապահ մարմինները կվարեն համապատասխան վիճակագրություն:

## 5. Կազմակերպության անդամ դառնալու, անդամությունից դուրս գալու և անդամությունից հեռացնելու կարգի մասին տեղեկություն

Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ցանկացած քաղաքացի և իրավաբանական

[3] ՀՀ արդարադատության նախարարի հրամանը նորմատիվ իրավական ակտերը հրապարակման ներկայացնելու, միասնական կայքում դրանք հրապարակելու, դրանցում ուղղում կատարելու և պաշտոնական ինկորպորացիայի կարգերը սահմանելու մասին՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145009

[4] Այդ մասին տեղեկացվել ենք՝ ՀՀ քննչական կոմիտեի 24.01.2024թ.. N 12/12/21734-2024 և 24.01.2024թ.. N 12/12/21706-2024 գրություններով, ՀՀ ՆԳՆ ոստիկանության 30.01.2024թ. N 5/4-1-110 և 29.01.2024թ. N 5/4-2-104 գրություններով, ՀՀ ԲԴԽ Դատական դեպարտամենտի 09.02.2024թ. ՈԴԴՎ-1Ե-895 գրությամբ:

անձ, որն ընդունում է Սախարովի կենտրոնի կանոնադրությունը և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

## 6. Կազմակերպության խորհրդի անդամների մասին տվյալներ

**Կազմակերպության խորհրդի անդամներն են.**

1. Մերի Խաչատրյան՝ նախագահ (ըստ Կանոնադրության՝ ի պաշտոնե տնօրենը Խորհրդի նախագահն է),
2. Սեյրան Մարտիրոսյան՝ անդամ,
3. Լուսինե Թոփլաղալցյան՝ անդամ,
4. Ռուզաննա Ավագյան՝ անդամ,
5. Գևորգ Պետրոսյան՝ անդամ:

**Խորհրդի իրավասությունների շրջանակը.**

1. քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ, բացառությամբ սույն կանոնադրությամբ ժողովին և տնօրենին վերապահված իրավասությունների,
2. ծանոթանում է Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնում նրա մարմիններին,
3. պահանջում և ստանում է Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,
4. սահմանում է Կազմակերպության անդամների և կամավորների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը,
5. իրականացնում է Կազմակերպության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

## 7. Գործընկերների մասին տվյալներ

**Սախարովի կենտրոնի գործընկերներն են.**

**ՔՀԿ-ներ**

- «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական կլոր սեղան» բարեգործական հիմնադրամ
- «Դիզակ արտ» ՀԿ
- «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
- «Հայկական կարիտաս» բարեսիրական ՀԿ / “Armenian Caritas” Benevolent NGO
- «Բիոսոֆիա» առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության զարգացման կենտրոն (ՀԿ)
- «Գյումրու առաջընթաց» ՀԿ
- «Ասպարեզ» լրագրողական ակումբ
- «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ
- «Ազատ թռիչք» սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամ
- «Սարվոր» զբոսաշրջային, սոցիալ-կրթական, բնապահպանական ՀԿ
- «Նռան հատիկ» համայնքային զարգացման հիմնադրամ

- «Ազապե վորլդ» երիտասարդական ՀԿ
- «Կանայք հանուն զարգացման» ՀԿ
- «Ալվան ծաղիկ» ՀԿ
- «Շիրակի ուսուցիչների միություն» ՀԿ
- «Կոնտակտ պլյուս» իրավապաշտպան ՀԿ
- «Կայունություն և առաջընթաց» ՀԿ
- «Կանանի հոգեբանական կենտրոն» ՀԿ
- «Հյուսիսի երիտասարդներ» ՀԿ
- «Սարապատ» ՀԿ
- «Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ
- «Երիտասարդների նախաձեռնությունների ակումբ» ՀԿ
- «Արևը Սյունիքից» ՀԿ
- «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
- «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
- «Մաքուր Գորիս» ՀԿ
- «Գորիսի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
- «Թթենի» ՀԿ
- «Հայկական Կարմիր խաչ» ընկերություն

**ՏԻՄ-եր**

- Ամասիայի համայնքապետարան
- Աշոցքի համայնքապետարան
- Գյումրու համայնքապետարան
- Գավառի համայնքապետարան
- Ճամբարակի համայնքապետարան
- Սևանի համայնքապետարան
- Վարդենիսի համայնքապետարան
- Գորիսի համայնքապետարան
- Տաթևի համայնքապետարան
- Տեղի համայնքապետարան

**Այլ հաստատություններ**

- Շիրակի պետական համալսարան
- Գավառի պետական համալսարան
- Գավառի պետական բժշկական քոլեջ
- Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ
- Գավառի պետական երաժշտական քոլեջ
- Գորիսի պետական համալսարան
- Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
- Գորիսի պետական քոլեջ
- Շիրակի մարզի փաստաբանական գրասենյակ
- Շիրակի մարզային դատախազություն
- Գյումրու ոստիկանության անչափահասների բաժին
- Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզի դպրոցներ
- «Սյունյաց երկիր» թերթ
- Գորիսի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախակրթարան
- Գորիսի մանկական գրադարան

## 8. Ֆինանսավորող (Դոնոր) կազմակերպությունների ցանկ

2023 թվականի ընթացքում իրականացրել է «Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության հզորացում ՀՀ մարզերում, փուլ 5» եռամյա ծրագիրը (E-ARM-2021-0172)։

Սակայն Կազմակերպությունն իր գործունեության ողջ ժամանակահատվածում իրականացրել է բազմաթիվ դրամաշնորհային ծրագրեր։ Այստեղ ներկայացվում են այն ֆինանսավորող (դոնոր) կազմակերպությունների ցանկը, որոնց ֆինանսական աջակցությամբ տարբեր թվականներին իրականացվել են տարբեր ծրագրեր.

1. Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն
2. Քաունթերփարթ ինթերնեշնլ
3. «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն
4. Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
5. Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
6. Միգրացիայի միջազգային կազմակերպություն
7. ՄԱԿ-ի ՓԳՀ հայաստանյան գրասենյակ
8. Ուրբան ինստիտուտ
9. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
10. Համաշխարհային ուսուցում
11. Փախստականների հարցերով դանիական խորհուրդ
12. ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
13. Հանուն ժողովրդավարության ազգային հիմնադրամ
14. Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատուն
15. Համաշխարհային բանկ
16. Օգնության և զարգացման կաթոլիկ կազմակերպություն
17. Համագործակցությունը զարգացնելու միջեկեղեցական կազմակերպություն
18. Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ
19. «Հաց՝ աշխարհի համար» (BfdW)

## 9. Աուդիտորական ընկերության մասին տեղեկություն

Սախարովի կենտրոնն իր դրամաշնորհային ծրագրերն իրականացնելիս պարտադիր անցնում է աուդիտ։ 2023 թվականի ընթացքում Սախարովի կենտրոնը երկու անգամ աուդիտ է անցել։ Կազմակերպության ֆինանսական աուդիտն իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ը, որը գործում է իր ընկերության կանոնադրության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրված թիվ ԱԾ 054 աուդիտորական ծառայությունների իրականացման անժամկետ լիցենզիայի հիման վրա։

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, որը առևտուր է անում որպես Բեյքեր Թիլլի, հանդիսանում է Baker Tilly International Ltd.-ի համաշխարհային ցանցի անդամ, որի անդամներն առանձին և անկախ իրավաբանական անձինք են: Ավելի քան 25 տարի առաջ հիմնադրված և Երևանում հիմնված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն շարունակում է զարգանալ մշտական բարելավումներով և նորարարություններով: Բեյքեր Թիլլի Արմենիայի ծագումը սկսվում է 1996թ.-ից, որն առաջինն էր, որ ստացավ աուդիտի լիցենզիա Հայաստանում 001 համարով: Այն Հայաստանում միակ հաշվապահական և խորհրդատվական ընկերությունն էր, որը մասնաճյուղեր հիմնեց Հայաստանի մարզերում: Գրասենյակի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, 0010, Հանրապետության 22, Հեռ.՝ + (374 10) 582 478, 544 301, 544 307, էլ.փոստ՝ info@bakertillyarmenia.com։

## 10. Սախարովի կենտրոնի աշխատակազմը

1. Մերի Խաչատրյան,
տնօրեն

2. Սեյրան Մարտիրոսյան,
Շիրակի մասնաճյուղի ղեկավար,
ծրագրերի համակարգող

3. Ռուզաննա Ավագյան,
տնօրենի օգնական

4. Անի Մովսեսյան,
հաշվապահ

5. Օֆելյա Գալստյան,
թարգմանիչ

6. Լուսինե Թոփլաղալցյան,
Գեղարքունիքի մասնաճյուղի
ղեկավար

7. Նանե Մնացականյան,
Սյունիքի մասնաճյուղի
ղեկավար



8. Արմեն Պետրոսյան,
Շիրակի մասնաճյուղի
ղեկավարի օգնական

9. Ռուբեն Խաչիկյան,
Գեղարքունիքի մասնաճյուղի
ղեկավարի օգնական

10. Սոնա Ալավերդյան,
Սյունիքի մասնաճյուղի
ղեկավարի օգնական

11. Նաիրա Ավետիսյան,
իրավաբան,
Երևան

12. Վիկտորիա Եղոյան,
իրավաբան,
Շիրակի մասնաճյուղ

13. Ագապի Մանուկյան,
իրավաբան,
Շիրակի մասնաճյուղ

14. Մանուշ Նալբանդյան,
իրավաբան,
Գեղարքունիքի մասնաճյուղ

15. Լիլիթ Հայրապետյան,
իրավաբան
Սյունիքի մասնաճյուղ

16. Լուիզա Զաքեյան,
ասիստենտ,
Շիրակի մասնաճյուղ

## 11. Հրատարակումներ

1. «Շիրակի մարզի Ամասիա և Աշոցք միավորված համայնքերի հանրային կրթական հաստատություններում (դպրոցներում) առկա խնդիրները», հետազոտություն-2, Վարդուհի Գոլչենկո, Գյումրի, 2023թ.:
2. «Մեդիագրագիտության դասավանդման ուղեցույց», Ագապի Մանուկյան, 2023թ.:
3. «Աշխատանքային միգրացիան որպես երիտասարդների հասության և կրգավիճակի փոփոխության նախաձեռնություն, սոցիոլոգիական ուսումնասիրություն», Անդրանիկ Շահինյան, 2023թ.:
4. «Անհատական շինարարության իրականացման և վերահսկման կարգերը», գիրք-ուղեցույց, Սերգեյ Նազարեթյան, 2023թ.:
5. «Հետազոտական աշխատանքների ժողովածու», Գավառ, 2023թ.:
6. «Գավառ համայնքում հասարակական տրանսպորտի հասանելիությունը», զեկույց, Գավառ, 2023թ.:
7. «Կրթության հասանելիության մշտադիտարկում Շիրակի մարզի հեռավոր գյուղական համայնքներում», Եսթեր Գրիգորյան, Գյումրի, 2023թ.:
8. «ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի ՔՀԿ-ների կարողությունների գնահատում և դրանց՝ հանրային ընկալման մակարդակի վերլուծություն», Զեկույց, Գորիս, 2023թ.:
9. «Ուսուցիչների հետազոտական աշխատանքների ուղեցույց-ձեռնարկ», Կարինե Ալեքսանյան, 2023թ.:

## 12. Հապավումներ

1. ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
2. ՀԿ - Հասարակական կազմակերպություն
3. ՔՀԿ - Քաղաքացիական հասարակության կառույց
4. ՔՀԴ - Քաղաքացիական հասարակության դպրոց
5. ՀՎՈՒՄԿ - Հետազոտական-վերլուծական, ուսումնամեթոդական գործունեության կենտրոններ
6. ԱԺ - Ազգային ժողով
7. ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
8. ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
9. ԲՈՒՀ - Բարձրագույն ուսումնական հաստատություն
10. ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ
11. ԱՄՆ- Ամերիկյան դոլար
12. ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
13. ՓԳՀ - Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
14. ԵԱՀԿ - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

***«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունն իր երախտագիտությունն է հայտնում ներկայիս դոնորին՝ «Հաց աշխարհի համար» (Bread for the World) գերմանական կազմակերպությանը, ինչպես նաև նախորդ բոլոր դոնոր կազմակերպություններին, որոնք հնարավորություն են ընձեռել Սախարովի կենտրոնին իրականացնելու իր գործունեությունը՝ պաշտպանելով մարդու իրավունքները Հայաստանի Հանրապետությունում երեք տասնամյակից ավելի:***